ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

05.07.2023 11:34

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ուղերձ է հղել ՀՀ Սահմանադրության օրվա առթիվ.

«Հարգելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա կապակցությամբ:

Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, գերակայությամբ օժտված իրավական ակտ հանդիսանալով, հստակ ուրվագծել է մեր պետության և հասարակության առանցքային և հիմնարարար սկզբունքները՝ Հայաստանի Հանրապետությունը հռչակելով որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն:

Հատկանշական է այն, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է նաև մեր՝ փաստաբաններիս անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված գործունեությունը:

Հիշատակելով վերոգրյալը՝ պետք է արձանագրենք, որ փաստաբանական համայնքը, այնուամենայնիվ, առերեսվում է լուրջ խնդիրների, որոնք անմիջականորեն կարող են ազդեցություն ունենալ մասնագիտական գործունեության վրա:

Թերևս անընդունելի է, երբ փաստաբանի գործունեությանը խոչընդոտում են իրավապահ համակարգի ներկայացուցիչներ, այն էլ բռունցքներով:

2023 թվականի առաջին կիսամյակում երեք փաստաբան ենթարկվել է բռնության իրավապահ համակարգի ներկայացուցիչների՝ մասնավորապես ոստիկանության ծառայողների կողմից: Հատկանշական է նաև այն, որ տվյալ փաստաբանները ոստիկանության ծառայողների կողմից բռնության են ենթարկվել իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս: Կատարվածի առնչությամբ, փաստաբանները նպատակ ունենալով կանխել մասնագիտական գործունեության իրականացման նման խոչընդոտները, ներկայացրել են իրենց օրինական պահանջները՝ ակնկալելով իրավական պետությանը համահունչ արձագանք:

Այս խորհրդանշական օրը լիահույս եմ, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքի գերակայությունը չի սասանվի:

Դարձյալ շնորհավորում եմ բոլորիս այն համոզմունքով, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որպես իրավական հենարան հռչակված մայր օրենք, ծառայելու է իր նպատակին»,- ասվում է ուղերձում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })